

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/5

22 մարտի 2013թ.

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 25.01.2013թ-ի նիստում քննության են առնվել «Մերձավանի ոգելից խմիչքների գործարան» ՍՊԸ 26.09.2011թ-ի թիվ 293 և 01.10.2011թ-ի թիվ 244 գանգատները (այսուհետ նաև գանգատներ) «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ. թիվ 1011422/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որով որոշվել է «Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 14.10.2011թ-ի թիվ 54/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել, իսկ գանգատները մերժել: Մասնավորապես.

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 14.10.2011թ-ի նիստում քննության առնելով «Մերձավանի ոգելից խմիչքների գործարան» ՍՊԸ «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ. թիվ 1011422/1 ակտի դեմ բերված գանգատներն ընդունել է թիվ 54/1 որոշումը, որի համաձայն ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով «Հ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

«Մերձավանի ոգելից խմիչքների գործարան» ՍՊԸ (այսուհետ՝ նաև ընկերություն) կողմից հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ «Հ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից «Հ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 22.12.2010թ-ին հարուցվել է թիվ 83173210 քրեական գործը: Քրեական գործի շրջանակներում «Հ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ա.Շ.Ալեքսանյանի 06.06.2011թ-ի որոշման համաձայն «Մերձավանի ոգելից խմիչքների գործարան» ՍՊԸ-ում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում:

Համաձայն «Հ ԿԱ ՊԵԿ նախագահի 24.06.2010թ. թիվ 1011422/1 հանձնարարագրի «Հ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում: Վերստուգման արդյունքում 23.09.2011թ-ին կազմվել է թիվ 1011422/1 ակտը, որով ընկերությանը լրացուցիչ պարտավորություն է առաջադրվել ընդամենը 48.552.769 դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով՝ 28037069 դրամ, ԱԱՀ-ի գծով՝ 20215700 դրամ, սոցիալական վճարի գծով՝ 300000 դրամ:

«Մերձավանի ոգելից խմիչքների գործարան» ՍՊԸ 26.09.2011թ-ի թիվ 293 գանգատում մասնավորապես նշված է.

իրականացնելով 24.06.2011թ. թիվ 1011422/1 հանձնարարագրով վերստուգում, որի հիմքում ընկած ժամանակաշրջանը համապատասխանում է 12.08.2010թ. թիվ 1011422 հանձնարարագրով սահմանված ժամանակաշրջանի հետ, ստուգող տեսուչները հարկ չեն համարել կիրառելու «Հ-ում ստուգումնարի կազմակերպման և անցկացման մասին» «Հ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները: Փոխարենը բավարարվել են ինչ-որ պատճառաբանություններով, որոնք կապված են ըստ էության գործընթացն իրականացնելուց խուսափելու փորձի հետ:

Սահմանված լինելով «Հարկային ծառայության մասին» «Հ օրենքի 7-րդ հոդվածով տեսուչները հիմք չեն ընդունել ընկերության կողմից ներկայացված և «Շահութահարկի մասին» «Հ օրենքով սահմանված փոխառության հիքները, ինչի արդյունքում համախառն եկամուտից նվազեցումների Օրենսդրի կողմից սահմանված պահանջներն անտեսվել են:

Փաստացի ծախսերի և փոխառությամբ ստացված գույքի առկայության պայմաններում նման հիմքերը ծախսագրումների ժամանակ չօգտագործելը հիմք է հանդիսանում դեռ չկազմված ակտի անվավերության: Ինչպես նաև նման հիմքեր են ստեղծվում 26.05.2011թ-ին «Հ Ազգային ժողովի կողմից ընդունված «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարումների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի պահանջները չկիրառելը: Ասել է, թե ստուգման ընթացակարգն իր մեջ ներառում է սահմանված նորմերի պարտադիր կիրառում, որի բացակայությունը դարձնում է դրա արդյունքում դեռ կազմվելիք ակտի անվավերության:

Վերոգրյալը հաշվի առնելով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հ օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով, ընկերությունը խնդրում է հետամուտ լինելու օրենքի պահանջներին ու ձեռնամուխ լինելու թիվ 1011422/1 հանձնարարագրի հիմքով կայացվելիք ստուգման ակտը համապատասխանեցնելու օրենքին:

Ըստ ընկերության 01.10.2011թ-ի թիվ 244 գանգատի.

30.09.2011թ.-ին փոստով առաքված նամակով ստացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետ Ռ.Գալոյանի թիվ 29032/14 ուղեկցական գրությամբ Ընկերությանն առաքված թիվ 1011422/1 ակտը, որը Ընկերության համար անակնկալ էր: Անակնկալ էր այնքանով, որ Ընկերության կողմից 26.09.2011թ-ին առձեռն կոմիտե է մուտքագրվել թիվ 293 բողոքը, որով վերջինս հայտնել էր իր անհամաձայնությունը կապված վերստուգման ընթացքում աշխատակիցների կողմից կիրառված նորմերի և օրենքի պահանջների ճշտության հետ:

Հատկանշական է, որ Ընկերության բողոքն ակտի կազմման արդյունքում կազմողների կողմից կիրառված նորմերի ակնհայտ սխալ ու օրենսդրի կողմից սահմանված պահանջների խախտմամբ կիրառվելուց զատ նրանք ընդհանրապես հաշվի չեն առել Ընկերության որևէ դիմում և բողոք, որպիսի հանգամանքը բացակայում է նշյալ ակտում: Փոխարենը վերջիններս ակտով արձանագրել են իբր տնտեսվարողը հրաժարվել է այն ստորագրելուց և ստանալուց: Ինչից ենթադրելով և ինչպիսի ապացույցներով են վերջիններս հիմնավորում նման հրաժարականն ակտում բացակայում է: Բացակայում է նաև այն, որ վերջիններս իրենց ստուգման արդյունքում հաշվի են առել ամբողջ փաստաթղթերը և դրանցով ապացուցված հանգամանքներն այն դեպքում, երբ այդ մասին Ընկերությունը նախապես դիմումով ներկայացրել էր:

Հակասելով իրենք իրեց աշխատակիցները ոչ թե իրականացրել են օրենքի նորմի ապահովում, այլև կամայականության դրսևորմամբ ինքնակամ որոշել կիրառման ենթակա օրենսդրական նորմերը, որը տվյալ դեպքում կիրառման ենթակա չէր, մի դեպքում փաստելով այն հիմքը, որն իրենց տվել է նման վարչարարության իրավունք, մյուս դեպքում անտեսելով այն:

Նախևառաջ ակտով արձանագրված հարկատեսակները և դրանց հաշվարկը չի համապատասխանում գործող օրենքներին ու կիրառելի չեն այն հիմքով, որ դրանց կիրառման սահմանները և եկամտահարկի և շահույթահարկի սահմանումներից դուրս են: Իսկ դրանց հաշվարկման սահմանները չեն կարգավորված որևէ օրենքով: Դուրս գալով ստուգման ժամանակահատվածից վերջիններս փորձել են արհեստական ուժեղացնել ակտով գումարը այն դեպքում, երբ վերստուգման իմաստը կայանում է դրանց հստակեցման և նախկին ստուգման ակտով օրինախախտումները վերացնելուն:

Ստացվում է, որ սահմանված լինելով օրենքով տրված լիազորություններով վերջիններս չարաշահել են դրանք ու կազմել մի ակտ, որը ավելի է հակասում օրենքի պահանջներին, քան նախկին ակտը, չհաշված այն, որ տեսուչների կողմից ակտով արձանագրված Ընկերության գործողությունները մեղմ ասած չեն համապատասխանում իրականությանը:

Իրականացնելով վերստուգում ստուգող տեսուչները հարկ չեն համարել կիրառելու ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, խախտելով ՀՀ արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը չեն ընդունել Ընկերության կողմից ներկայացված և <Շահույթահարկի մասին> ՀՀ օրենքով սահմանված փոխառության ծախսագրման փաստը, ինչի արդյունքում համախառն եկամուտից նվազեցումների Օրենսդրի կողմից սահմանված պահանջներն անտեսել են:

Վերոգրյալը հաշվի առնելով ընկերությունը վերադարձնում է թիվ 1011422/1 ակտը և ակնկալում դրանում տեղ գտած օրինախախտումների վերացման ու ակտի փոփոխության, որի արդյունքում այն կհամապատասխանի օրենքին:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկել է եզրակացության, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ 23.09.2011թ-ի թիվ 1011422/1 ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ-ի թիվ 1011422/1 ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչի <Վերստուգում նշանակելու մասին> 06.06.2011թ. որոշման և ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետի որոշման <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջներով, համաձայն <եկամտահարկի մասին> ՀՀ օրենքի 21 հոդվածի հաշվարկվում է գանձվում է եկամտահարկ 11%-ի չափով՝ ընդամենը 2009թ. համար 13055678 դրամ:

Արդյունքում հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները եկամտահարկի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 28.037.069 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ-ի թիվ 1011422/1 ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչի <Վերստուգում նշանակելու մասին> 06.06.2011թ. որոշման և ներկայացված փաստաթղթերի, նախորդ ստուգման ակտը մնում է անփոփոխ:

Ընկերության կողմից ստուգվող ժամանկաշրջանի համար ներկայացված փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը ՀՏ ներկայացրած ԱԱՀ-ի ամսեկան հաշվարկների 12-րդ տողում արտացոլված մանրածախ ապրանքաշրջանառության ԱԱՀ-ով հարկվող շրջանառության ծավալի մեջ ներառել է նաև իրացված շտերի արժեքը, որը ներառված է նաև ԱԱՀ-ի հաշվարկի 8-րդ տողում արտացոլված ԱԱՀ-ից ազատված գործարքների շրջանառության մեջ, գումարով՝ 4903000 դրամ, համապատասխանաբար՝ 2009թ. հուլիսին 634000 դրամ, օգոստոսին 118000 դրամ, սեպտեմբերին 580000 դրամ, հոկտեմբերին 228000 դրամ, նոյեմբերին 660000 դրամ, դեկտեմբերին 617000 դրամ, 2010թ. փետրվարին 30000 դրամ, մարտին 47000 դրամ, մայիսին 1444000 դրամ, հունիսին 545000 դրամ և առանց համապատասխան հարկային հաշիվների ավել ԱԱՀ է հաշվանցվել 14332000 դրամ: Այսինքն, ընկերության կողմից խախտվել է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության և 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, համաձայն որի շրջանառելի բազմակի օգտագործման տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը: Նշված խախտումների հետևանքով ընկերությունը ստուգվող ժամանկաշրջանում պակաս ԱԱՀ է հաշվարկել 10364000 դրամի չափով, համապատասխանաբար 2009թ-ի հուլիսին 819000 դրամ, օգոստոսին 1265000 դրամ, սեպտեմբերին 1471000 դրամ, դեկտեմբերին 2875000 դրամ, 2010թ-ի փետրվարին 530000 դրամ, մայիսին 1790000 դրամ, հունիսին 1614000 դրամ, իսկ 2009թ-ի հոկտեմբերին 228000 դրամով, նոյեմբերին 660000 դրամով և 2010թ-ի մարտին 47000 դրամով ավել հաշվարկված ԱԱՀ-ի գումարը ենթակա է ետ վերադարձման (պակասեցման) ընդհանուր գումարով 935000 դրամ:

Ընկերությունը ստուգվող ժամանկաշրջանի ընթացքում սահմանված կարգով թվով 5 տեղեկություն չի ներկայացրել մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ: Խախտվել է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները, որի հետևանքով նույն օրենքի 43.1 հոդվածի համաձայն հաշվարկվում է տուգանք չներկայացված յուրաքանչյուր տեղեկության համար 5000 դրամի չափով, գումարով՝ 25000 դրամ:

Հիմք ընդունելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով ընդամենը գանձման է առաջադրվել 20.215.700 դրամ:

Ակտի 16-րդ կետով արձանագրվել է, որ ստուգման պահին գործատուի մոտ փաստացի աշխատանք իրականացնողներից 5 (հինգ) աշխատողի աշխատանքի ընդունումը ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գործատուի կողմից չեն կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները:

Համաձայն <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի սոցիալական վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 300.000 դրամ:

Քննարկման ընթացքում նաև նշվել է, որ ընկերության տնօրենի նկատմամբ հարուցված քրեական գործով մեղադրանքը հիմնավորվել է և գործն ուղարկվել է դատարան:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 14.10.2011թ-ի թիվ 54/1 որոշմամբ կասեցված վարույթը ենթակա է վերսկսման, իսկ գանգատները՝ մերժման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը:

Առաջարկել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին <Մերձավանի ոգելից խմիչքների գործարան> ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-գանգատի վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշման նախագիծը համապատասխանեցնել ընկերության նկատմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարուցված քրեական գործի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և գանգատարկման խորհուրդ ներկայացված դատական ակտին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի Գ.Գևորգյանի, 2012թ-ի սեպտեմբերի 3-ի դատավճռով վճռել է

վերջինիս մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ:

Նշված դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.11.2012թ-ի օրինական ուժ ստացած որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.11.2012թ-ի որոշմամբ մասնավորապես արձանագրվել է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կազմված հ. 1011422/1 վերստուգման ակտով արձանագրված դրվագներով, սույն փորձաքննությանը տրամադրված քրեական գործում առկա փաստական տվյալներով, ինչպես նաև հարկատուի կողմից բերված առարկություններով, զուտ հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից կատարված ճշգրտումներով, <Մերձավանի ոգելից խմիչքների գործարան> ՍՊԸ-ում, անուղղակի եղանակով կատարված հաշվարկներով, տույժ և տուգանքներով հանդերձ, առաջանում է պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ընդամենը՝ 27.227.172 դրամ գումարի չափով պարտավորություններ: Մասնավորապես.

- եկամտահարկ՝ ընդամենը 7.646.472 դրամ, այդ թվում՝ եկամտահարկ 3.560.639 դրամ, տույժեր 1.949.450 դրամ, տուգանքներ 2.136.383 դրամ:

- ավելացված արժեքի հարկ՝ ընդամենը 19.280.700 դրամ, այդ թվում՝ ԱԱՀ 9.429.000 դրամ, տույժեր 3.608.300 դրամ, տուգանքներ 6.243.400 դրամ:

- պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ընդամենը 300.000 դրամ:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.11.2012թ-ի օրինական ուժ ստացած որոշումը, գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ. թիվ 1011422/1 ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 14.10.2011թ-ի թիվ 54/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ. թիվ 1011422/1 ակտի 3-րդ կետից նվազեցնել ընդամենը 20.390.597 դրամ, այդ թվում՝ եկամտահարկ 9.495.039 դրամ, տույժեր 5.198.534 դրամ, տուգանքներ 5.697.024 դրամ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.09.2011թ. թիվ 1011422/1 ակտի 5-րդ կետից նվազեցնել ընդամենը 935.000 դրամ ավելացված արժեքի հարկ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ